Հավելված N 3
ՀՀ վարչապետի N 1200 - Ա
որոշման

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

1. Ծակքար, Կարճաղբյուր գետերի (այսուհետ՝ գետեր) և հարակից տարածքի քարտեզների ուսումնասիրություն,

2. Գետերի և հարակից տարածքների վերաբերյալ հավաքագրված տվյալների ներմուծում աշխարհագրական տեղեկատվական համակարգ,

3. Գետերի ափամերձ հատվածներում առկա շենք-շինությունների հաշվառում և քանդման ենթակա շինությունների նախնական ցանկի կազմում,

4. Գետերի ափամերձ հատվածներում տեղակայված ենթակառուցվածքները և բնակավայրերն իրար կապող կամուրջների հաշվառում և դրանց վիճակի գնահատում,

5. Գետեր թափվող կոյուղագծերի և թափոնների հաշվառում,

6. Գետեր փաստացի թափվող արտադրական հոսքաջրերի ծավալների գնահատում և ջրի որակի վրա արդյունաբերության բացասական ազդեցության գնահատում,

7. Գետերի հունի մեջ թափված աղբի ծավալների և գետի հոսքին խոչընդոտող այլ գործոնների գնահատում,

8. Գետերի ջրի որակի գնահատում,

9. Գետերի հունի փոփոխությունների ուսումնասիրություն,

10. Գետերի հիդրոլոգիական դիտակետերի տեղորոշման վերանայման և արդիականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ ջրի առավելագույն մակարդակի, ինչպես նաև գետերի առավել վարար հատվածներում ջրի ծավալի և թողունակության գնահատում,

11. Գետերի հունների արդյունավետ մաքրման աշխատանքների կազմակերպման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում միջազգային փորձագետների ներգրավում,

12. Գետերի երկայնքով առավել ռիսկային գոտիներում ափապաշտպան կառույցների հաշվառում, ինչպես նաև դրանց արդիականացման և նորերի կառուցման գնահատում,

13. Գույքագրման արդյունքների քննարկում և ձևակերպում,

14. Նախնական ֆինանսական գնահատում,

15. Ֆինանսավորման հնարավոր աղբյուրների ուսումնասիրություն,

16. Գույքագրման արդյունքների հիման վրա միջոցառումների ծրագրի մշակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ